ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N ՏՀՏ-1227

ք. Երևան «03 » հունվար 2025 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն՝ Արտակ Պողոսյանի, (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), 1227 «Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ **876 696 100** (ութ հարյուր յոթանասունվեց միլիոն վեց հարյուր իննսունվեց հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ գումար (ներառյալ ԱԱՀ), ընդ որում՝

11001 «Էլեկտրոնային կառավարում» միջոցառման գծով՝ *331 581 800 ՀՀ դրամ,*
11002 «ՏՀՏ բովանդակություն և հեռավար ուսուցում» միջոցառման գծով՝ 263 114 300 ՀՀ դրամ,
11003 «ՏՀՏ ենթակառուցվածքների ապահովում և սպասարկում» միջոցառման գծով՝ 282 000 000 ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների

անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ պայմանագրի 5.3 կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարման դեպքում պահանջել հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը, կամ նշված գումարի չափով պակասեցնել հետագա տարիների ֆինանսավորումը, կամ հետագա տարիների պայմանագրերով պարտավորեցնել լրացնել ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարումը,

2.1.7. սույն պայմանագրի 2.4.7 կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.1.8. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջել ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջել վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կազմակերպությունից ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման կազմակերպությանը՝ լրամշակման համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.2 կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել գործող իրավական ակտերի, պետական մարմնի կողմից հաստատված կամ տրամադրված մեթոդական ցուցումների, հրահանգների պահանջներին համապատասխան,

2.4.4. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.7. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպության կատարողական հաշվետվությունները: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար,

2.4.8. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.9. պետական մարմնին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

2.4.10. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունների ձեռքբերումն իրականացնել աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և/կամ ՀՀ աշխատաքային օրենսգրքով սահմանված սահմանված կարգով,

2.4.12. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2025 թվականի դեկտեմբերի 22-ը, իսկ ժամանակացույցով պայմանավորված ավելի ուշ ավարտվող միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումից հետո,

2.4.13. պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում համապատասխան չափով գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը պետական մարմինը կազմակերպությանն է վճարում համաձայն ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան՝ սույն պայմանագրի 2.4. կետում նշված հաշվետվությունն ընդունելուց հետո:

3.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը վճարվում է կազմակերպության բանկային հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կազմակերպության կողմից միջոցառումների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում պետական մարմինն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.4. Համաձայն «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2025 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.3 Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

6.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

6.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

6.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

6.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

6.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա

եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011036721
Հ/Հ 900011036739
Հ/Հ 900011036747
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Բուռնազյան 37
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018005737
ՀՎՀՀ 01550374

Տնօրեն՝

Ա.Պողոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված
2025 թ.հունվարի 3-ին
կնքված NՏՀՏ- 1227 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ

«1227. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ

Իրականացվելիք միջոցառման				
Անվանում	**Կատարման ենթակա գործառույթների նկարագիր**	**Ակնկալվող արդյունքներ և դրանց գնահատման չափանիշներ**	**Վերջնաժամկետ**	**Բյուջետային հատկացում (հազ. ՀՀ դրամ)**
«11001. Էլեկտրոնային կառավարում»	***1. Հայկական կրթական ցանցի մշտադիտարկում և սպասարկում***			**331,581.8**
	1.1. Հայաստանի կրթական ցանցի մշտադիտարկում, կենտրոնական հանգույցի սերվերների սպասարկում՝ արտաքին միջամտություններից ցանցի պաշտպանություն, ինտերնետային պարունակության ֆիլտրում, հակավիրուսային պաշտպանություն, ուսումնական հաստատություններին էլեկտրոնային հասցեների տրամադրում	Հայաստանի կրթական ցանցի կենտրոնական հանգույցը անխափան և շուրջօրյա աշխատում է, ապահովելով 1414 ուսումնական հաստատություններին մեկ կենտրոնում միակցելու գործընթացը: Սպասարկվում են ցանցում ընդգրկված բոլոր ուսումնական հաստատությունների էլեկտրոնային հասցեները: Ապահովվել է ՀԿՑ կենտրոնական հանգույցում գործող կայքերի տեխնիկական սպասարկումը:	շարունակաբար՝ ամբողջ տարվա ընթացքում	
	2. Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) գործարկում և ամբողջականացում			

2.1. Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) զարգացում և կատարելագործում	Գործում են ԿԿՏՀ-ի հետևյալ ենթահամակարգերը. ա) Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ (ԴԿՏՀ) բ) Նախադպրոցական կրթության տեղեկատվական համակարգ գ) Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ	շարունակաբար՝ ամբողջ տարվա ընթացքում	
2.2. Առաջին դասարանցիների ընդունելության հայտագրման համակարգի կատարելագործում, համապատասխանեցում օրենսդրական փոփոխություններին, սպասարկում	Հայտագրման համակարգը գործում է անխափան և շահառուների համար ապահովում հավասար մեկնարկային պայմաններ	ըստ անհրաժեշտության և շարունակաբար	
2.3. Նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի թվայնացում, թվայնացված տարբերակների կատարելագործում	Թվայնացված են ՆՈՒՀ-երում և դպրոցներում պարտադիր գործածության ենթակա 2020 թվականի սեպտեմբերի 8-ի N 28-Ն և 2024 թվականի 30 մայիսի N46-Ն հրամաններով նախատեսված փաստաթղթերից 8-ը	2025 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ, ըստ անհրաժեշտության՝ ամբողջ տարվա ընթացքում	
2.4. Նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում ըստ մակարդակների լիցենզիոն տեղերի բաշխման թվայնացում, ինտեգրում ԿԿՏՀ-ին	Հանրակրթական ուսումնական հաստատություններում կատարելագործված և լավարկված է, իսկ նախադպրոցական և մասնագիտական ուսումնական հաստատություններում լիցենզիոն տեղերի բաշխումը թվայնացված է և ինտեգրված է ԿԿՏՀ-ին	ըստ անհրաժեշտության և շարունակաբար	

	2.5. Անվճար տրանսպորտային ծառայությունների շահառուների հաշվառման համակարգ	ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թվականի դեկտեմբերի 21-ի N 47-Ն հրամանով սահմանված՝ հանրակրթության մատչելիությունն ապահովելու նպատակով մանկավարժական աշխատողներին և սովորողներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցումն ապահովելու նպատակով շահառուների հաշվառումը իրականացվում է էլեկտրոնային ենթահամակարգի միջոցով: Ենթահամակարգը թվայնացված է և ինտեգրված է ԴԿՏՀ-ին:	2025 թվականի հունվար 3-րդ տասնօրյակ	
	2.6. Օլիմպիադաների դպրոցական փուլի իրականացում	Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի մասնակիցների ներկայացումն իրականացվում է էլեկտրոնային տարբերակով, որն ինտեգրված է ԴԿՏՀ-ում: Ըստ մարզերի, դասարանների և առարկաների մասնակիցների ցանկերը հասանելի են և ներբեռնվում են հաշվետվությունների reports.emis.am կայքից՝ ըստ թույտվությունների մակարդակի:	2025 թվականի հունվար 3-րդ տասնօրյակ	
	2,7, Հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինասավորման բանաձևի թվայնացում	ՀՀ կառավարության 2022 թվականի N1481-Ն և ՀՀ ԿԳՄՍ նախարարի N79-Ն հրամաններին համապատասխան մշակված է պետական բյուջեից ֆինանսավորվող դպրոցների ֆինասավորման հաշվարկի էլեկտրոնային համակարգը՝ finances.emis.am	2025 թվականի հունվար 3-րդ տասնօրյակ և շարունակաբար ողջ տարվա ընթացքում	

2.8. Ուսումնական հաստատություններում թափուր հաստիքների ձևավորման և սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ ուսուցիչների գործուղման էլեկտրոնային համակարգ	Սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ ուսուցիչների գործուղման լրամշակված և արդիականացված էլեկտրոնային համակարգը անխափան գործում է Հանրակրթական ուսումնական հաստատություններում թափուր հաստիքների էլեկտրոնային ձևավորման ենթահամակարգը ներդրված է ուսուցիչների գործուղման համակարգում:	2025 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	
2.9. Կրթության առանձնահատուկ պայմանների գնահատման և արձանագրման համակարգի կատարելագործում, օրենսդրական փոփոխություններին համապատասխանեցում, սպասարկում	Համակարգը լրամշակված և համապատասխանեցված է օրենսդրական նոր փոփոխություններին	շարունակաբար՝ ամբողջ տարվա ընթացքում	
2.10. 12-ամյա կրթության ապահովման տեղեկատվական համակարգի կատարելագործում https://oosc.emis.am	Համակարգը համապատասխանեցված է օրենսդրական նոր փոփոխություններին, կատարված են փոփոխություններ, ծրագրային բարելավումներ	2025 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	
2.11. Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվող սովորողների https://dimord.emis.am/ համակարգի կատարելագործում,	Հանակարգը համապատասխանեցված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի հուլիսի 30-ի N 60-Ն հրամանով նախատեսված փոփոխություններին, համակարգը գործում է անխափան և շահառուների համար ապահովում հավասար մեկնարկային պայմաններ	2025 թվականի հուլիսի 2-րդ տասնօրյակ	

	սպասարկում		
	2.12. Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների և շրջանավարտների կարիերայի ուղղորդման, աջակցման և հետևման համակարգ	ՄԿԿՏՀ-ին ինտեգրված գործում է նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների և շրջանավարտների կարիերայի ուղղորդման, և հետևման և հաշվետվությունների ստացման ենթահամակարգը՝ career.emis.am	2025 թվականի փետրվար 3-րդ տասնօրյակ և շարունակաբար՝ ամբողջ տարվա ընթացքում
	2.13. Բուհերի ուսանողների համար արտոնություններից (զեղչերից) օգտվելու էլեկտրոնային համակարգ	Մշակված և ներդրված է մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ ՄԿԿՏՀ	2025 թվականի օգոստոս 3-րդ տասնօրյակ
	2.14. Բուհերի շրջանավարտների պետական ավարտական փաստաթղթերի թվայնացման համակարգ	Մշակված և ներդրված է մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ ՄԿԿՏՀ	2025 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
	2.15. Ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման կազմակերպման, տարակարգի դիմելու և տրամադրման էլեկտրոնային համակարգ	ԿԿՏՀ-ում ներդրված է ուսուցիչներին վերապատրաստող կազմակերպությունների, նրանց կողմից վերապատրաստման ծրագրերի և մոդուլների ներկայացման, ուսուցիչների կողմից վերապատրաստող կազմակերպությունների ընտրության համակարգը, թվայնացնացված և ավտոմատացված են ուսուցչի ատեստավորման և որակավորման տարակարգերի շնորհման գործընթացները	2025 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
	2.16 Կամավոր ատեստավորման դիմած ուսուցիչների քննությունների հանձնման էլեկտրոնային համակարգ	Գործում է կամավոր ատեստավորման դիմած ուսուցիչների vexams.emis.am համակարգը և՛աշխատող ուսուցիչների, և՛ որպես ուսուցիչ դեռևս չաշխատող մասնակիցների համար:	2025 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ և շարունակաբար՝ ամբողջ տարվա ընթացքում

2.17 Փոխգործելիության հարթակի միջոցով տվյալների փոխանակման ապահովում	Փոխգործելիությսն հարթակի միջոցով տարբեր գերատեսչությունների հետ տվյալների փոխանակման ապահովման նպատակով նոր API-ների մշակում	շարունակաբար՝ ամբողջ տարվա ընթացքում
2.18 Հաշվետվությունների ստացման միասնական հարթակի զարգացում, կատարելագործում	Գործում է հաշվետվությունների ստացման համակարգը	շարունակաբար՝ ամբողջ տարվա ընթացքում
3. Կրթության ոլորտի վարչական ռեգիստրի վարում		
3.1. Հանրակրթության ոլորտի վարչական վիճակագրական ռեգիստրի վարում (ԴԿՏՀ միջոցով)	Վարվում է հանրակրթության վարչական ռեգիստրը. տվյալները մշակվել, հաստատված ձևերին ու ժամկետներին համապատասխան ներկայացված է ՀՀ ԿԳՄՍՆ և ՀՀ վիճակագրական կոմիտե:	ԿԳՄՍՆ՝ փետրվարի 2-րդ տասնօրյակ, Վիճակագրական կոմիտե՝ փետրվարի 3-րդ տասնօրյակ շարունակաբար և ըստ անհրաժեշ-տության
3.2. ԿԿՏՀ բովանդակության համապատասխանեցում ՀՀ կրթության օրենսդրության ընթացիկ փոփոխություններին	Կրթության ոլորտի օրենսդրական փոփոխությունների հիման վրա լրամշակված և արդիականացված ԿԿՏՀ:	շարունակաբար՝ տարվա ընթացքում
4. ՀՀ կառավարության 2021-2026թթ. միջոցառումների ծրագրով 2025 թվականին նախատեսված թվայնացման գործառույթներ		
4.1. Պետական բյուջեից ֆինանսավորվող հանրակրթական ուսումնական հաստատությունների դասագրքերի պատվերի	Պետական բյուջեից ֆինանսավորվող հանրակրթական դասագրքերի պատվերի ձևավորման և բաշխման գործընթացների էլեկտրոնային մոդուլը գործում է	2025 թվականի մայիսի 3-րդ տասնօրյակ

ձևավորման և բաշխման գործընթացների թվայնացում («Կրթություն» բաժնի 2.1 միջոցառում) 4.2. Ավարտական փաստաթղթերի ձևավորման թվային մոդուլի կատարելագործում, օրենսդրական փոփոխություններին համապատասխանեցում, սպասարկում	Գործում է է հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտների Ediploma ավարտական փաստաթղթերի էլեկտրոնային համակարգը	2025 թվականի հունիսի 2-րդ տասնօրյակ	
5. Օժանդակող և հարակից գործառույթներ			
5.1. ԿԿՏՀ ենթահամակարգերը շահագործող ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների վերապատրաստումների կազմակերպում	Վերապատրաստված ԿԿՏՀ-ն շահագործող ուսումնական հաստատությունների տարբեր մասնագետներ:	պարբերաբար՝ տարվա ընթացքում	
5.2. «Աջակցություն» կայքի շահագործում (կրթության ոլորտի բոլոր շահառուների համար): ԿԿՏՀ-ում ներգրավված շուրջ 2600 նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններին աշխատանքային օրերին և	Գործում է «Աջակցություն» կայքը կրթության ոլորտի բոլոր շահառուների համար, որը պարունակում է տեսադասեր, ուղեցույցեր և աջակցող նյութեր ԿՏԱԿ–ի կողմից շահագործվող բոլոր համակարգերի մասին: Աջակցության տրամադրում՝ իրականացված «Զրուցարան» հավելվածի, էլ.փոստի, հեռախոսակապի միջոցով:	շարունակաբար՝ տարվա ընթացքում	

	ժամերին աջակցության տրամադրում ծրագրային և տեխնիկական խնդիրների լուծման համար:			
	5.3. Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ ՏՀՏ կարիքի ուսումնասիրություն, վերլուծություն և առաջարկների փաթեթի մշակում	ՀՀ դպրոցներում իրականացված է ՏՀՏ համալրվածության և կիրառության կարիքի գնահատում և ուսուցիչների կողմից ՏՀՏ կիրառման և փափուկ հմտությունների վերաբերյալ սոցհարցում: Կազմվել են հարցաթերթեր, ձևավորվել ընտրանք, բոլոր պետական դպրոցներին բաշխվել են իրենց համապատասխան էլեկտրոնային հարցաթերթեր: Ուսուցիչների էլեկտրոնային մատյաններում տեղադրվել է սոցհարցման հարցաթերթերը: Լրացված հարցաթերթերի հավաքագրումից հետո մաքրվել են SPSS բազաները, ճշգրտվել և լրամշակվել են տվյալները: Կազմվել է վերլուծություն և ներկայացվել ՀՀ ԿԳՄՍՆ:	2025 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	
	5.4 ԴԿՏՀ միջոցով հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ տարբեր վերլուծությունների իրականացում	ՀՀ ԿԳՄՍՆ են ներկայացված ընթացիկ բազմաբնույթ հաշվետվություններ և տար եկան ամփոփ տեղեկատվություն:	ըստ անհրաժեշ-տության՝ տարվա ընթացքում	

	5.5 ՀՀ ԿԳՄՍՆ, ՀՀ ՖՆ, ՀՀ վիճակագրական կոմիտե, «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակ, ՅՈՒՆԵՍԿՕ, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (ՅՈՒՆԻՍԵՖ), ՀԼՄ-ներին, ԱԺ պատգամավորներին և պատգամավորական խմբակցություններին, այլ շահագրգիռ կազմակերպությունների կտրամադրվեն հանրակրթության ոլորտը բնութագրող տեղեկատվություն՝ ամփոփ տեղեկանքներ, վիճակագրական տվյալներ, աղյուսակներ և այլն: վիճակագրական և այլ հաշվետվություններ, ամփոփ տեղեկանքներ՝ ըստ ՀՀ մարզերի, գյուղական և քաղաքային համայնքների, աշակերտների և ուսանողների թվաքանակների, հաստատությունների տիպերի, կրթական ծրագրերի աստիճանի և ըստ այլ անհրաժեշտ չափանիշների:	Հավաքագրված տվյալները մշակվել, վերլուծվել են (ստանդարտ ավտոմատացված և բովանդակային) և տրամադրվել է տեղեկատվություն, ըստ անհրաժեշտության, պատրաստվել են վիճակագրական հաշվետվություններ ու զեկույցներ:	ըստ անհրաժեշ-տության՝ տարվա ընթացքում	

	5.6 Տեղական ու միջազգային կազմակերպությունների, պետական կառույցների հետ համագործակցություն:	Մասնակցություն քննարկումների, համաժողովների, աշխատաժողովների, վերապատրաստումների և այլն: Ոլորտային համատեղ ծրագրերի, միջոցառումների և աշխատանքների իրականացում:		
«11002. ՏՀՏ բովանդակություն և հեռավար ուսուցում»	***1. ՏՀՏ բովանդակության շարունակական ապահովում և զարգացում***			**263,114.3**
	1.1. Հայկական կրթական միջավայր» պորտալի և ենթակայքերի աշխատանքների համակարգում, բովանդակային հարստացում	• «Հայկական կրթական միջավայր» պորտալում (https://armedu.am/) հրապարակված կրթական, մշակութային տեղեկատվական նյութեր (նորություններ՝ 1200, հայտարարություններ՝ 40 և օգտակար հղումներ): • «Հայկական կրթական միջավայր» ֆորումում (http://forum.armedu.am) կազմակերպված և համակարգված կրթական քննարկումներ և մասնագիտական խորհրդատվություն (թեմաներ՝ 20): • «Պաշարների շտեմարան» կայքում (https://lib.armedu.am/) տեղադրված էլեկտրոնային կրթական պաշարներ, ուսումնամեթոդական նյութեր և այլն (ընդհանուր թվով՝ 1500): • Անխափան աշխատած «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ» (http://esource.armedu.am/) կայք: Իրականացված ՀՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքի (https://escs.am/) բովանդակային մասի անգլերեն և ռուսերեն լեզուներով թարգմանություն, տեղադրված անհրաժեշտ նյութեր (ավելի քան 100 անգլ., 15 ռուս.): «Կրթական ալիքի» (https://www.youtube.com/user/armeduchannel/) հարստացված բովանդակություն, տեղադրված կրթական և մշակութային տեսահոլովակներ:	շարունակաբար՝ ամբողջ տարվա ընթացքում	

1.2. ԿՏԱԿ-ի Ուսումնառության կառավարման համակարգերում ուսուցիչների հեռավար վերապատրաստումների կազմակերպում 1.3. Հայաստանի Տավուշի մարզի դպրոցների 9-րդ դասարանի բնագիտական առարկայի ավարտական քննությունն ուսումնական նախագծով փոխարինելու աշխատանքների կազմակերպում	Ուսումնառության կառավարման համակարգերում (http://learning.armedu.am/ և https://app.e-school.am/) կազմակերպված հեռավար դասընթացներ 5 տարբեր թեմաներով՝ 600 ուսուցիչների համար (ընդհանուր թվով՝ 13 վերապատրաստում): Տավուշի մարզում 9-րդ դասարանի բնագիտական առարկաների քննությունն ուսումնական նախագծով փոխարինելու իրականացված գործընթաց (պիլոտային ծրագրի 2-րդ տարի):	
1. Հեռավար ուսուցման կազմակերպում		
1.1. Հեռավար ուսուցման աշխատանքների կազմակերպում՝ ապահովելով աշակերտների կրթություն ստանալու իրավունքի իրացումը՝ հավասար, որակյալ և ներառող կրթական համակարգ ունենալու նպատակով:	Իրականացված և բարելավված «Էլեկտրոնային դասավանդում. մենթոր դպրոցներ» ծրագիր. 24 մենթոր դպրոցներում մշտադիտարկված էլեկտրոնային կրթության որակի ապահովման մշակված մեխանիզմները և ընթացակարգերը, տրամադրված խորհրդատվական աջակցություն՝ իրականացվող գործընթաները բարելավելու նպատակով: Մենթոր դպրոցներում իրականացված էլեկտրոնային դասավանդման կարողությունների զարգացմանը միտված վերապատրաստումներ և տրամադրված շարունակական մենթորական աջակցություն: Ցուցաբերված շարունակական խորհրդատվական և համակարգման աջակցություն Շարունակաբար՝ ամբողջ տարվա ընթացքում պատվիրատու և մենթոր դպրոցներին, մարզային դպրոցներում հեռավար դասերին մասնակցող աշակերտների ընտրանքային	Շարունակաբար՝ ամբողջ տարվա ընթացքում

		խմբի ստուգված գիտելիքներ, իրականացված հարցումներ ծրագրի շահառուների շրջանակներում ծրագրի կողմից մատուցվող ծառայությունների շարունակական բարելավման համար. Առնվազն 30%-ով ավելացած էլեկտրոնային դասավանդման կարողությունների տիրապետող ուսուցիչների թիվ մենթոր դպրոցներում: Ընդհանուր առմամբ 24 մենթոր դպրոցների ուսուցիչների կողմից իրականացված հեռավար դասավանդում ՀՀ 10 մարզերի ուսուցչի բացակայություն ունեցող առնվազն 93 դպրոցներում: Իրականացված ուսումնառության կառավարման E-School ազգային հարթակի դասավանդման և ուսուցման ընթացքում ակտիվ կիրառում ծրագրի շահառու մենթոր և պատվիրատու դպրոցներում:		
	2. Համագործակցություն և ԵՄ «Ի-թվինինգ» ծրագրին մասնակցություն			
	2.1. Կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրերի համակարգում: Տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով հանդիպումների, քննարկումների, համատեղ աշխատանքների իրականացում: 2.2. Եվրամիության Իթվինինգ Պլյուս ծրագրի շարունակականության ապահովում:	Իրականցված համագործակցություն և մասնակցություն Կրթության ոլորտում տեղական և միջազգային կազմակերպությունների ՏՀՏ ծրագրերին, աշխատանքային քննարկումներին, կազմակերպած հանդիպումներին: Ըստ անհարժեշտության տրամադրած խորհրդատվական և տեղեկատվական աջակցություն ուսումնական հաստատություններին և կրթական կազմակերպություններին: Իթվինինգ ծրագրում ընդգրկված շուրջ 800 ուսումնական հաստատությունների 500 դասավանդողների համակարգված աշխատանք, 1300 պասիվ ուսուցիչների ակտիվածված հաշիվներ, ծրագրում ներգրավված 200 նոր մասնակիցներ: Ծրագրի ֆեյսբուքյան էջի կազմակերպված շահագործում: Կազմակերպված երկու սեմինարների շարք (առկա և հեռավար)՝ և նոր, և փորձառու մասնակիցների համար:	Շարունակաբար՝ ամբողջ տարվա ընթացքում	

«11003. ՏՀՏ ենթակառուցվածքների ապահովում և սպասարկում»	***1. Հայաստանի կրթական ցանցի ինտերնետային մատակարարում, ծրագրային և տեխնիկական սպասարկում***			**282,000.0**
	1.1. Հայաստանի կրթական ցանցում ընդգրկված ուսումնական հաստատություններին ինտերնետի մատակարարման, հաստատությունների ներքին համակարգչային ցանցերի, աշխատող համակարգիչների ծրագրային ու տեխնիկական սպասարկման ծառայության պատվիրակում մրցույթով ընտրված կազմակերպությանը (2024թ. օգոստոսի 09-ին կնքված «ԿՏԱԿ-ԲՄԾՁԲ-24/01» պայմանագրի համաձայն)	Հայաստանի կրթական ցանցում ընդգրկված բոլոր ուսումնական հաստատություններին ինտերնետի մատակարարման, ինչպես նաև՝ հաստատությունների ներքին համակարգչային ցանցերի և աշխատող համակարգիչների ծրագրային ու տեխնիկական սպասարկման ծառայություններն անխափան մատուցված են՝ համաձայն գնման հայտով ներկայացված տեխնիկական բնութագրի:	Շարունակաբար՝ ամբողջ տարվա ընթացքում	
ԸՆԴԱՄԵՆԸ				**876,696.1**

Պետական մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011036721
Հ/Հ 900011036739
Հ/Հ 900011036747
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կազմակերպություն

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն»
ՊՈԱԿ
Երևան, Բուռնազյան 37
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018005737
ՀՎՀՀ 01550374

Տնօրեն՝

_____ Ա.Պողոսյան

(ստորագրություն)